Հետո՝ վիկը, իբրև թիթեռնածաղիկների
քնտանիքին պատկանող բույս, իր արմատ-
ների վրա դանդող պարարիկների և խորը
գնացող արմատների մնացորդներով հողը
հարստացնում է բորակով: Նույն հողում
վիկից հետո ցանվող մյուս մշակությունները
լավ բերք են տալիս, մասնավոր յեթե կլի-
մայական պայմանները չորային չեն:

Վիկի մշակութունը շատ ավելի մեծ նշա-
նակութուն ունի մեր լեռնային շրջաններք
համար: Վորովհետև վիկի ցողունները կան-
գուն չեն, ուստի վիկ ցանում են սովորա-
բար վորևե հացարույսի հետ. աշնանացանի
դեպքում՝ աչորայի հետ, գարնանացանի
դեպքում՝ վարսակի կամ գարու հետ:

Առանց հացարույսի ցանած վիկը պա-
հում ու խճճվում է և լավ չի գարգանում,
թե կանաչ մասսա և թե սերմեր քիչ է տա-
լիս ու դժվարությամբ է հնձվում:

Մի դեպյատին հող ցանելու համար վա-
րան սերմ է հարկավոր: Այդ կախված է մի
չարք պայմաններից, այն է՝ հողային, կլի-
մայական և այլն: Բացի այդ, նշանակու-
թյուն ունի նաև այն հանգամանքը, թե
ինչ նպատակով է վիկը մշակվում՝ խմոր,
թե սերմեր ստանալու համար: Եթե վիկը
ցանվում է սերմ ստանալու համար, ապա
պետի ավելի նոսր ցանել: Այս դեպքում, ի-
հարկե, սերմ քիչ պետի ցանել:

Միջոց, հողերում խոտի համար մի դե-
պյատին 10-12 վուրթ սերմ են ցանում, վա-
րից մաս 1/3 (3-4 փ.) գարի՝ կամ վարսակ
և լինում, իսկ 2/3-ը (7-8 փ.) վիկ. ավելի
գարարա հողերում՝ վիկից կարելի յե քիչ
վերցնել:

Վիկը ցանում են թե շարքացան և թե չա-
ղացան, շարքացանի դեպքում 3-4 փ. պա-
կաս են ցանում:

Պորհուրդների իշխանությունը ԱՆՀԱՏԱԿԱՆ խոշոր տնտե-
սություն ստեղծելու կապիտալիստական ձևին հակադրում է ՀԱ-
ՄԱՅՆԱԿԱՆ խոշոր անտեսություն ստեղծելու պրոլետարական
ձևվը՝ կոոպերացման, կոլեկտիվացման միջոցով, վոր մանր ու
մանրագույն անտեսություններին հնարավորություն է տալիս
բարձրացնելու տեխնիկայի և կուլտուրայի ամենաբարձր աստի-
ճանին:

ՀԱՄ.Կ.Կ(Բ) 16-ԲԴ ԿՈՆՅ. ԲԱՆԱԶԵՎԻՑ

«ԱՆՀՐԱԺԵՇՑ Ե, ՎՈՐ ԳՅՈՒ-
ՂԱՅԻՆ ՅՈՒՐԱԲԱՆՉՅՈՒՐ ԿՈ-
ՄՈՒՆԱՅՈՒՄ, ՅՈՒՐԱԲԱՆՉՅՈՒՐ
ԱՐՏԵԼՈՒՄ ՏԵՍԵԻ ՄԻ ԱՅՆ-
ՊԻՍԻ ԲԱՆ, ՎՈՐԻՆ ՈԳՆՈՒՄ Ե
ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՎՈՐԻ ՄԵՉ
ԳՏՆԻ ՀՈՂԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՆՈՐ
ՁԵՎԵՐ, ՎՈՐՈՆԲ ՎՈՉ ԹԵ ԳՐԻ-
ԲԵՐՈՎ, ԱՅԼ ԳՈՐԾԱԿԱՆ
ԿՅԱՆՔՈՒՄ ՑՈՒՅՑ ԵՆ ՏՍԼԻՍ
ԻՐԵՆՑ ԱՌԱՎԵԼ ԼԻՆԵԼԸ ՀՆԻՑ»:

ԼԵՆԻՆ



Ամսաթիվ	Շաբաթվա օրերը	Ո Ր Ա Պ Ի Լ
1	Զորեֆշարքի	
2	Հիմզարքի	
3	Ուրբաթ	
4	Շաբաթ	
5	Կիրակի	
6	Յերկուշարքի	
7	Յերեֆշարքի	
8	Զորեֆշարքի	
9	Հիմզարքի	
10	Ուրբաթ	
11	Շաբաթ	
12	Կիրակի	
13	Յերկուշարքի	
14	Յերեֆշարքի	
15	Զորեֆշարքի	

ԿԱՐԵՎՈՐ ԴԵՊՐԵՐ

1 ԱՊՐԻԼ 1921 թվին ղաշնակցութեան ավանայութեան լիկիւզացիան: 10 ԱՊՐԻԼ 1918 թվին արտատնտեսից Պետրոզբազ յեկամ Վ. Ի. Լևինը, վերին դիմագրեցին հազարավոր

Ամսաթիվ	Շաբաթվա օրերը	Ո Ր Ա Պ Ի Լ
16	Հիմզարքի	
17	Ուրբաթ	
18	Շաբաթ	
19	Կիրակի	
20	Յերկուշարքի	
21	Յերեֆշարքի	
22	Զորեֆշարքի	
23	Հիմզարքի	
24	Ուրբաթ	
25	Շաբաթ	
26	Կիրակի	
27	Յերկուշարքի	
28	Յերեֆշարքի	
29	Զորեֆշարքի	
30	Հիմզարքի	

ԿԱՐԵՎՈՐ ԴԵՊՐԵՐ

բանվորներ: 22 ԱՊՐԻԼ 1870 թվին Սիմրիբոկ քաղաքում ծնվեց Վ. Ի. Լևինը: 27 ԱՊՐԻԼ 1921 թվին բացվեց Եվլիարի ջրանցքը: 20 ԱՊՐԻԼ 1920 թվին Ազրբեջանում հաստատվում է Ոսկերչային Իշխանութեան:

ՎԼԱԴԻՄԻՐ ԻԼԻՉ ԼԵՆԻՆ

Վ. Ի. Լենինը ծնվել է 1970 թվին, ապրիլի 22-ին. Ռուսաստանի Սիմբիրսկ քաղաքում: Նրա հայրը Սիմբիրսկի նահանգի ժողովրդական դպրոցների տեսչուհի էր: 1879 թվին Լենինը մտնում է տեղական գիմնազիան՝ սովորելու, վորտեղ և ստանում է իր միջնակարգ կրթությունը:

1887 թվին կախում են Լենինի մեծ յեղորդը՝ Ալեքսանդր Իլիչին, թագավորի կյանքի գեմ մահափորձ անելու համար:

1891 թվին Լենինը գնում է Սամարա, վորտեղ կազմակերպում է առաջին մարքսիստական խմբակը: 1893 թվին անցնում է Պետերբուրգ, կապ է ստեղծում տեղական մարքսիստական խմբակի հետ, վոր հետագայում, Լենինի ղեկավարությամբ, դառնում է մայրաքաղաքի մարքսիստական շարժման կենտրոնը:

Ընկ. Լենինն անողորմարար կռվում է նաև ռուսիկոլության գեմ և գլխավորում է որեցոր տճոզ բանվորական շարժումը:

1903 թվին Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական կուսակցության յերկրորդ համագումարում պառակտում է առաջ դալիս, և մեծամասնությունն անցնում է Լենինի կողմը: Այսպիսով հիմք է դրվում բայլչեիկյան կուսակցության, վոր Լենինի անմիջական ղեկավարությամբ կռիվ է մղում բանվորների շահերին դավաճանող մեղաբեկների դեմ:

Տարիների ընթացքում բայլչեիկյան կուսակցությունը պատրաստում է բանվոր դասակարգին ու աշխատավոր գյուղացիությանը՝ ցարական-բուրժուական-կալվածատիրական կառավարությունը տապալելու համար, վոր և տեղի յե ունենում 1917 թվի հոկտեմբերին:

Հոկտեմբերի ուղին Լենինիցմի փորձված ուղին է, վորով ընթանում է մեր մեծ ԽՍՀՄ-ը և արտասահմանի պրոլետարիատը՝ իր վերջնական ազատագրման համար:

ԱՂՐԲԵՋԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՑՆԱՑՈՒՄԸ

Անդրկովկասի խորհրդային Հանրապետությունների շարքում Աղբբեջանն առաջինն էր, վորի բանվորներն ու գյուղացիները արագուսեցին իմպերիալիստների վարձական մուսավաթականներին և հաստատեցին Խորհրդային իշխանություն:

Յերկու տարի տևող մուսավաթական իշխանությունը հրի ու սրի յեր մատնել վողջ յերկիրը և արնաքամ եր անում աղբբեջանի աշխատավորությունը: Արդյունաբերությունը, մանավանդ նավթարդյունաբերությունը կատարելապես ընկել էր, բանվորների դուրսը սրեցոր սոսկալի յեր դառնում, իսկ բեկերի ու աղալարների սանձարձակությանը սահման չկար գյուղում:

Յեվ ահա, չգիմանալով այս սոսկալի պայմաններին, Աղբբեջանի աշխատավորությունը, Բազվի պրոլետարիատի առաջնորդությամբ և կոմկուսակցության ղեկավարությամբ ապստամբում է, դուրս ջում մուսավաթական կառավարությունը և 1820 թվի ապրիլի 29-ին Աղբբեջանը հայտարարվում է խորհրդային Հանրապետություն:

Աղբբեջանի խորհրդայնացումից հետո միայն աշխատավորությունը ազատ շունչ է քաշում և ամբողջ յեռանդով ու թափով լծվում է ստեղծագործական հսկա աշխատանքների: Այդ հեղափոխության, Բազվի պրոլետարի Օժանդակությամբ շուտով խորհ. իշխանություն հաստատվեց Հայաստանում և ապա՝ Վրաստանում:



ԵՏԵԼԸ ԿԱՄ ՄԱՏԸ ԿՏԲԵԼԸ

Յեթե խաղողի վաղը, ինչպես ասում են, էրան գլխու թողնենք, կոկոսի յերկարել, բազմաթիվ ճյուղեր տալով վաթաթվել ծառերին կամ փովել գետնին: Այդպիսի վաղի խաղողը լինում է մանր և վատորակ: Ետելը և վաղին վորոշ ձև տալը անհրաժեշտ է նրա կանոնավոր զարգացման և պտղաբերության համար:

Կանոնավոր ետելու համար նախ՝ պետք է հետախոյն ունենալ և ապա՝ իմանալ հետևյալը՝

1. Կտրելով մատի մի մասը՝ մենք ստիպում ենք, վոր արմատների և տերեւների միջոցով գոյացած հյութերը մնան մատի չկտրած մասում և այդպիսով ուժեղացնում ենք աչքերից դուրս յեկող չվերի չորանալը:
2. Յեթե մատի միջի հյութերը շարժվում են առանց արգելքի՝ չվերն ուժեղ կերպով են զորգնում, բայց պտուղը պակասում է: Ընդհակառակը՝ յեթե հյութերի շարժումը մատի մեջ ադատ չի, չվերը համեմատաբար թույլ են զարգանում, բայց առատ բերք են տալիս:
3. Մատը վորքան ուղղահայաց (դիք, ցից) է լինում, այնքան ավելի ուժեղ է դրանում, շատ է յերկարում, բայց պտուղ չի է տալիս: Ընդհակառակը՝ մատը վորքան թեք է լինում կամ վորքան մոտենում է պտուղած դրություն, չվերն այնքան թույլ են զորանում, բայց ավելի յեն պտուղ տալիս:

Մատերի կուսցնելը կամ ողակածե կապելը կատարվում է պտուղը շատացնելու նպատակով: Կարելի յե պտուղը շատացնել նաև շատ մատեր և շատ աչքեր թողնելով: Մատի վրա աչք վորքան շատ թողնենք, բերքն այնքան շատ կլինի, բայց այնքան թույլ կլինի չվերի աճեցողությունը և, ընդհակառակը: Բայց չափով մոտանալ, վոր չափից դուրս պտղաբերությունը թուլացնում է վաղը,

իսկ վաղի թուլանայն աղղում է հետագա բերքատվության վրա:

Ետը լինում է յերկու տեսակ՝ կարճ և յերկար: Յեթե մատի վրա 3-4 աչք են թողնում, կարճ ետ է, իսկ յեթե ավելի յեն թողնում, կոչվում է յերկար ետ: Յերկար կամ կարճ ետելը կախված է խաղողի տեսակից: Այն տեսակները, վորոնք ուժեղ զարգացող չվեր են տալիս, ինչպես, որինսի, հաչաբաչը, յերկար պետք է ետել, իսկ վորոնց մատերը լավ չեն զորանում, կարճ պետք է ետել:

Շուտ կամ ուշ ետելը նոնպես իր նշանակություն ունի: Ետը վորքան վաղ կատարվի զարնանն աչքերն այնքան շուտ կրացվեն: Մեր դիտողությունները ցույց են տվել, վոր մարտի վերջերն ետած վաղերի աչքերն 8-10 որ առաջ են բացվում, քան այն վաղերը, վորոնք ետվել են ապրիլի կեսերին:

Այս հանգամանքը շատ կարևոր նշանակություն ունի, քանի վոր մեզնում մինչև ապրիլի վերջերը հաճախ ցրտահարություններ են լինում և վաղ բացված աչքերը միշտ ցրտահարվում ու փչանում են: Գարնան ցրտահարությունից շատ անդամ այգիները բուրոլին զրկվում են բերքից, դրա համար էլ ետը շուտ անելու կարիք չկա: Հնարավորության չափ ուշ ետելը մեր պայմաններում անհրաժեշտ է, քանի վոր այդպիսով այգին պաշտպանված կլինի վորոշ չափով զարնան ցրտահարությունից:

Սակայն շատ էլ չպետք է ուշացնել, վորովհետև այս դեպքում այգին փորեն ուշանում է: Ուշ կարելի յե ետել այն այգիները, վորոնք վորեւ պատճառով նույն զարնանը չեն փորվելու: Մեղանում ետելու ամենից հարմար ժամանակը պետք է համարել մարտի կեսերից մինչև ապրիլի կեսը:

ԽՈՐՀ ԻՌԴՆԵՐ՝ ԾԵՐԱՄԱՊԱՅԻՆ

1) Եերամ պահելու ժամանակ չերամատները չափաի ավելի, վոր փոշի չբարձրանա, վորովհետև փոշին տերեւի վրա նստելով՝ կանցնի չերամների ստամոքսն ու նրանից կլնաի: Փոշոտ տերեւը դժվարամարս

է: Բացի այդ, փոշու մեջ յեղած միկրոօրգանիստներն էլ վորդի ստամոքսն անցնելով՝ փստում են նրան: Եերամատանը թափված կեղտի մեծ կտորները պիտի ձեռքով հավաքել, իսկ գետնի վրա թափվածները՝ թաց շորով

սրբել: Խճուղու և փոշոտ ճանապարհների յեղերին բուսած թթենու տերևներ չի կարելի տալ շերամին, վորովհետև այդ տերևները փոշոտ են լինում:

2) Երամատանը չի կարելի ճրաղ վառել — նախ ճի հոտը և ընդհանրապես ամեն տեսակի հոտերը վորդերին վնասում են: Յեթե երեկտրահանութուն չկա, ապա լուսավորության համար պիտի լապտերով (Փանարով) մոմեր դործածել:

3) Արևի ճառագայթները յեթե ուղղակի ընկնեն վորդերի վրա, կսպանեն նրանց, ուստի շերամատան լուսամուտները պիտի հաստ վարագույրներով ծածկել:

4) Մուկը և մրջյունը վնասում են վորդերին: Դարակները, մանավանդ յերբ առաստաղից են կախված, վորդերին պաշտպանում են մկներից: Մկներից պաշտպանվելու համար կարելի յե նաև դարակների վորդերին, կամ յեթե նրանք առաստաղից են կախված, թռկով փուշ կապել: Իսկ մրջյուններից պաշտպանվելու համար սպունդը կամ բամբակը շաքարաջրով պիտի թրջել և դնել կամ դարակների վորդերի, կամ մրջյունների բների մոտ: Մրջյունները կհավաքվեն թրջած սպունդի կամ բամբակի վրա, վորից հետո պիտի վերցնել և ամուր սեղմելով վորջնացնել:

5) Տերեխի նկատմամբ պիտի լինել խիստ զգուշ: Տերեւը պիտի լինի չափազանց մաքուր, չթրջված և չտաքացած: Փոքր շերամների համար միշտ պիտի ընտրել թարմ, փափուկ վայրի թթենու տերև, իսկ վորդերին մեծ հասակում կարելի յե տալ նաև պատվաստած թթենու տերևներ:

6) Տերեւը պիտի հավաքել յերեկոյան դեմ. վաղ առավոտյան չի կարելի տերև հավաքել, վորովհետև այդ ժամանակ տերևը շաղոտ է լինում: Տերեւը թթենուտից շերամատուն փոխադրելիս պիտի մաքուր լինի: Թրջված տերևներն իրենց ճյուղերով ցամաքացնելու համար կարելի յե կախել նաև թոկերի վրա: Ավելի լավ է շերամի վորդերին քաղցած պահել, քան թաց տերև տալ:

7) Յերբ տերևը թրջված է, պիտի լցնել մաքուր սավանի մեջ և նրա չորս ծայրերից բռնելով շարժել, վոր չորանա: Սավանը ջուրը ձծում է և տերևը հեշտությամբ չորանում է: Թրջված տերևներն իրենց ճյուղերով ցամաքացնելու համար կարելի յե կախել նաև թոկերի վրա: Ավելի լավ է շերամի վորդերին քաղցած պահել, քան թաց տերև տալ:

8) Յերբ վորդը փոքր է, մանավանդ իր առաջին և յրեկորդը չըջանումն է, լավ կլինի սենյակում խոնավութուն առաջացնելու համար կրակարանի վրա մի ամանով ջուր դնել, վորից բարձրացող գոլորչին չի թողնի, վոր տերևն արագ ցամաքի, այլ, ընդհակառակը, կահուղ կպահի: Փոքրիկ վորդերը հեշտությամբ են կրծում այդպիսի տերևը: Վորդերի մեծացած չըջանում, մանավանդ չորրորդ և հինգերորդ չըջանում, վորքան կարելի յե, պիտի աշխատել վոր շերամատունը չոր լինի, իսկ յերբ նկատվում է, վոր շերամի տակը յորրոս է դոռացել, խշտիները պիտի փոխել և սենյակի մի անկյունում չհագած կիր պահել, վոր խոնավութունը քաշի:

9) Երամի բնական սնունդը թթենու տերևն է, վորով միայն պիտի վորդին կերակրել: Մինձը և այլ խոտերը շերամի համար սննդարար նյութեր չեն պարունակում. դրա համար էլ, նույն իսկ վորդերի փոքր հասակում, պիտի խուսափել խոտով կերակրելուց:

10) Երամի բնական սնունդը թթենու տերևն է, վորով միայն պիտի վորդին կերակրել: Մինձը և այլ խոտերը շերամի համար սննդարար նյութեր չեն պարունակում. դրա համար էլ, նույն իսկ վորդերի փոքր հասակում, պիտի խուսափել խոտով կերակրելուց:

ԻՆՉՊԻՍԻ ՀՈՂ Ե ՀԱՎԱՎՈՐ ԲԱՄԲԱԿԻ ՀԱՄԱՐ

Բամբակենին պահանջում է պարարտ, փափուկ հող: Մեր հողերն ընդհանուր առմամբ այդ հատկութուններից զուրկ են: Բացի այդ, մեր հողերը միատեսակ չեն: Մեզանում պատահում են սևահողեր, խճահողեր, կավային կաղմվածք ունեցող հողեր, բոգահողեր, աղուտներ և այլն: Այս բոլոր հողերում էլ բամբակ ցանում են, բացի աղուտներից: Հողի հատկության ու տեսակի համաձայն էլ բերք է ստացվում: Որինակ՝ կավային ու քարքարոտ հողերում բամբակը լավ բերք չի տալիս, վորովհետև արմատները դժվարությամբ են մանում հողի մեջ և չեն կարողանում զարգանալ ու տարածվել, հետևապես և լավ չեն սնվում: Մինչդեռ սև, փափուկ հողերում բամբակենու արմատները խոր են գնում, լավ են սնվում, փարթամանում են, առողջ ճյուղեր են տալիս, վորի շնորհիվ առատ բերք է ստացվում:

Հողի սշակութունը

Վորքան էլ բամբակենու համար հատկացրած հողը լավ լինի, այնուամենայնիվ լավ պիտի մշակվի: Ամեն մի հող բերք է տալիս իր վրա դրած խնամքի և մշակության համապատասխան: Յեթե հողը քիչ է մշակվել կամ լավ չի մշակվել, բերքն էլ քիչ կամ

վատ կլինի: Ընդհակառակը, յեթե լավ է մշակվել, լավ էլ բերք կստացվի: Յուրաքանչյուր բամբակացան լավ պիտի մանաչի իր հողը և ծանոթ լինի մշակության

Վ Ա Ր Ը

Բամբակի համար հողի պատրաստելն ըսկավում է վարից, վոր մեծ նշանակութուն ունի, մանավանդ այն տեսակետից, թե յերբ



Բամբակի ցանքը յեղանակներին, իսկ այդ հնարավոր է միայն յայն ժամանակ, յերբ բամբակացանն իր հողը և վարած: Բամբակի համար հողը վարում են աշխարհ կամ դարնանը և վարում են վոր



Բամբակը քրում են ներկա դյուղատնտեսության թելադրած գիտելիքներով ու ցուցմունքներով մշակի: պակաս քան 22 սանտիմետր խորությամբ: Յուրաքանչյուր բամբակացան պիտի լավ

մանա, վոր բամբակի համար անհրաժեշտ է հողն աշնանից վարել, և առանց փոցխելու թողնել մինչև գարունը:

Աշնան վարի առավելութունը նախ այն է, վոր վարած հողն ամբողջ ձմեռվա ընթացքում ծծում է անձրևների ու ձյունի շրերը, վորոնց չնորհիվ հողը խոնավանում է, այդ խոնավութունը պահում է իր մեջ և շուտ չի չորանում, յերկրորդ՝ ձմռան ցրտերի չնորհիվ հողի կոշտերը փափկում, փշրվում են. յերրորդ՝ վոր աշնանավար ցելի մեջ յեղած զանազան բույսերի ցողուններն ու արմատները մինչև գարուն փտում են, վորից և

հողը պարարտանում է: Վերջապես՝ աշնան վարից և ձմռան ցրտերից փշանում են հողի մեջ գտնված և ձմեռող մնաստու թրթուրների հարսնյակները, ձվիկներն ու ձմեռող «չոփ» տիղերը:

Աշնան վարած արող մինչև բամբակի ցանքը ծածկվում է մոլախոտերով և այնքան էլ փափուկ չի լինում, վոր կարելի լինի ցանել, դրա համար էլ աշնանը վարած հողը ցանելուց մի քանի օր առաջ չորս խոփանի դութանով կամ, չորս խոփանի չեղած պեպքում, արորով (չթով) պետք է կրկնավար անել:

ԺՆԱԽՂՏԻ ՍԵՂՄԻ ԸՆՏՈՒԹՅՈՒՆԸ, ՑԱՆԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԸ ՅԵՎ ՅՏՂԱՆԱԿԸ

Ինչպես ամեն մի բույսի սերմ, այնպես էլ ծխախոտինը մի քանի տարի շարունակ ցանելուց հետո փոխում է իր հատկութունը և դեղավ զատանում է: Այդ պատճառով՝ կամ պիտի ամեն տարի ծխախոտի սերմի դրուչափոր ընտրութուն անել ցանքի ընտիր թրփերից, կամ թե ծխախոտագործական կուլիկտիվներից նոր սերմ բերել տալ:

Կամ և ընտիր սերմ ստացվում է թփի վերայի առաջին բացված ծաղիկներից: Ուշ բացված ծաղիկները պիտի կտրել ու հեռացնել: Սերմը պիտի թողնել թփի վրա մինչև վաղափճները (կնդուղները) լավ հատունանան և չորանան: Այդ ժամանակ կարելի չէ սերմափնջերը կտրել և արել տակ՝ շորի վրա փրփուկ չորացնել, սերմը հանել, քամու տարով մաքրել քակի մեջ լցնել ու չոր և մկներից ազատ տեղ պահել: Ցանելու սերմը 3-4 տարեկանից ավելի հին չպիտի լինի:

Սերմը ցանում են չիթիլանոցում՝ գարնանը, ձյունը հալը ընկնելուց հետո (ապրիլին), յերբ հողը հերկված է և յեղանակը՝ տաք:

Շիթիլանոցն անհրաժեշտ է պատրաստել արեվկող, քամիներից պաշտպանված (բաց կամ պատերի հարավակողմ ընկած) տեղերում: Բացի սովորական չիթիլանոցներից (ամուռներից), ծխախոտը ցանում են Վերմոնտի սերմերում:

Մրա համար փորում են 10-12 արջին խոր և մեկ ու կես արջին լայն փոսեր: Հողի յերեսի շերտը մի բահի բերանի չափով մի կողմի վրա յին թափում, մնացած մասը՝ հյուսիսային կողմի վրա, ապա այդ փոսի մեջ, կես արջին բարձրությամբ, ծղոտի կամ փրփուտով խոտի հետ խորը, ձիու տաք ու թաք

աղբ են թափում և թողնում, վոր ավելի տաքանա ու դոյրը յին սկսի բարձրանալ: Այդ ժամանակ սեահող են լցնում վրան ու 2-3 օր այդպես թողնում: Յերբ տեսնում են, վոր հողն սկսել է տաքանալ, չիտրացնում են, նորից սեահող են շաղ տալիս, հավաարեցնում, ջրում են և ապա սերմը շաղ տալիս՝ մեկին տանհինգ ավաղ խոնաված: հետո խախալով կես մասնաչափ հաստությամբ պարարտ սեահող են մաղում վրան, թխալով խախալով սնդաջնում, ցնցուղով (լեյկալով) նորից ջրում, վոր սերմը լավ կաշի հողին և նպատակի շուտ ծլիլուն:

Մի գեոյատին տեղի համար ցանում են մոտ կես ֆունտ սերմ, Վերմոնտում ցանելիս ումեն մի քառակուսի սածենի վրա ցանում են վոչ ավելի, քան 2 մսխալ սերմ:

Ջերմոցները ցրտից և տոթից պաշտպանելու համար վերելից ծածկում են աղակյա շրջանակներով, խոտիով, ծղոտով կամ յեղեղնով (զամիչով):

Սերմի ծլիլն արագացնելու համար շատ տեղ սերմը ծրեցնում են, հետո շաղ տալիս չիթիլանոցը: Դրա համար սերմը թրջում են և Փլանելից կամ ուրիշ կտորից պատրաստած տողրակի մեջ կապելով՝ դոլ ջրի մեջ են թափախում-հանում և տաք տեղում պահում:

Որական 2-3 անգամ սերմը շուտ են տալիս, վրան շուր շաղ տալիս, վոր չչորանա: Չորահինգ օրից սերմն ուռչում, սկսում է ճերմակ ծիլ արձակել: Ահա այդ ժամանակ, առանց հետաձգելու, պետք է տանել շաղ տալ չիթիլանոցը, հողով ծածկել, ջրել և պնդացնել, ինչպես սոված և վերելքը:

ՀՆԳԱՄՅԱԿԻ ՅԵՐՐՈՐԴ ՏԱՐԻՆ ՎՃՌԱԿԱՆ ՏԱՐԻ ՅԵ

ՅԵՐԿՐՈՐԴ ԲԱՅԼՇԵՎԻԿՅԱՆ ԳԱՐՆԱՆԱՑԱՆԸ

ՀԻՄՆԱԿԱՆՈՒՄ ԱՊՍՀՈՎԵԼՈՒ ՅԵ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄԸ ՅԵՎ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԽԱՐՍԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ

ՎՈՏՔԻ ՀԱՆԵՆՔ ԱՇԽԱՏԱՎՈՐԱԿԱՆ ԲԱԶՄԱՅԱԶԱՐ ՄԱՍՍԱՆԵՐԻՆ, ԼԱՅՆ ԺԱՎԱԼԵՆՔ ՍՈՑՄՐՑՈՒՄԻՆ ՈՒ ՀԵՐՎԵՇԵՑՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՅԵՎ ԳԵՐԱԿԱՏԱՐԵԼՈՒ ՅԵՐԿՐՈՐԴ ԲԱՅԼՇԵՎԻԿՅԱՆ ԳԱՐՆԱՆԱՑԱՆԻ ՊԼԱՆՆԵՐԸ

ԱՆՀԱՇՏ ՊԱՅՔԱՐ ՄՂԵԼՈՎ ԳԱՍԱԿԱՐԳԱՑԻՆ ԹՇՆԱՄՈՒ՝ ԴԱՇՆԱՍԻ, ԿՈՒԼԱԿԻ, ՆՐԱ ԱԳԵՆՏՈՒՐԱՑԻ ԴԵՄ ՅԵՎ ՆՐԱՆՑ ՈԳՆՈՂ ԱԶ «ԶԱԽ» ՈՊՈՐՏՈՒՆԻՍՏՆԵՐԻ, ՔՅԱԼԼԱԳՅՈԶՆԵՐԻ ՈՒ ՆՐԱՆՑ ՀԱՆԴԵՊ ՑՈՒՑԱԲԵՐՎՈՂ ՀԱՇՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ

ԼԵՆԻՆԻ ՑՈՒՑՑ ՏՎԱԾ ՈՒՂԻՈՎ ԱՌԱՋ ԴԵՊԻ ՍՈՑԻԱԼԻՉՄ

Ամսաթիվ	Շաբաթվա որերը	Ո Ր Ա Գ Ի Ր
1	Ուրբաթ	
2	Շաբաթ	
3	Կիրակի	
4	Յերկուշաբթի	
5	Յերեքշաբթի	
6	Չորեքշաբթի	
7	Հինգշաբթի	
8	Ուրբաթ	
9	Շաբաթ	
10	Կիրակի	
11	Յերկուշաբթի	
12	Յերեքշաբթի	
13	Չորեքշաբթի	
14	Հինգշաբթի	
15	Ուրբաթ	

ԿԱՐԵՎՈՐ ԳԵՊՔԵՐ

1 ՄԱՅԻՍԻ աշխատանքի միջոցառման ան: 4 ՄԱՅԻՍԻ 1926 թվին Անգլիայում օկուպացիոն ընդհանուր գործադուլ: 5 ՄԱՅԻՍԻ լույս ահապ բայլեվիկյան «Պրավդա» թերթի № 1-ը: Մամուլի տոն: 10 ՄԱՅԻՍԻ 1923 թվին Շվեյցարիայում սպիտակ գվարդիական կոնգրեսովի ձևաքով սպանվեց ԽՍՀՄ-ի ղեկավար Վ. Վ. Վորոպոկին: 10 ՄԱՅԻՍԻ 1920 թվին մայիսյան

Ամսաթիվ	Շաբաթվա որերը	Ո Ր Ա Գ Ի Ր
16	Շաբաթ	
17	Կիրակի	
18	Յերկուշաբթի	
19	Յերեքշաբթի	
20	Չորեքշաբթի	
21	Հինգշաբթի	
22	Ուրբաթ	
23	Շաբաթ	
24	Կիրակի	
25	Յերկուշաբթի	
26	Յերեքշաբթի	
27	Չորեքշաբթի	
28	Հինգշաբթի	
29	Ուրբաթ	
30	Շաբաթ	
31	Կիրակի	

ԿԱՐԵՎՈՐ ԳԵՊՔԵՐ

ապստամբությունը Հայաստանում: 23 ՄԱՅԻՍԻ 1926 թվին քրեիկ Համահայաստանյան համագումարը: 28 ՄԱՅԻՍԻ 1927 թվին ԽՍՀՄ-ի Անգլիայի և Խորհրդային Միության հարաբերությունները: 28 ՄԱՅԻՍԻ 1871 թվին հակահեղափոխական զորքերը տապալեցին Փարիզի կոմսենան:

Մ Ա Յ Ի Ս Ի Մ Ե Կ Ը

Մայիսի 1-ն ամբողջ աշխարհի պրոլետարիատի համերաշխության տոնն է: Դեռ 1886 թվականին Ամերիկայի Չիկագո քաղաքի բանվորները մայիսի 1-ին դուրս յեկան փողոց և պահանջեցին առի իրենց քաղաքական իրավունքներ, հաստատել 8 ժամյա բանվորական օր: 1889 թվականին յերկրորդ կոնտերնացիոնալի առաջին կոնգրեսը վորոշեց մայիսի 1-ը դարձնել մշտական տոնակատարության օր, յերբ բանվորներն առանց ազդի խորոսթյան պետք է դուրս գային և համերաշխ կերպով կովեյին բուրժուազիայի դեմ:

Սակայն շուտով սոցիալ-դեմոկրատական յերկրորդ կոնտերնացիոնալը դավաճանեց բանվորությանը: Համաշխարհային պատերազմի ժամանակ սոցիալ-դեմոկրատները բացարձակապես անցան կապիտալիստների կողմը՝ պատերազմն ավելի բորբոքելու համար և արգելեցին նույնիսկ մայիսի 1-ի տոնը:

նը: Միայն բալլեվիկներն էյին, վոր Լենինի ղեկավարությամբ զորահավաք յեկեթարկեցին պրոետարիատին՝ իր տոնը—մայիսի 1-ը կապիտալիստների դեմ քաղաքական ու տնտեսական պայքարի հոգոր տոն դարձնելու համար:

Հոկտեմբերից հետո մայիսի 1-ը ավելի հանդիսավորչությամբ և ամպում ԽՍՀՄ-ում, իրբև աշխատանքի հաղթանակի տոն:

Կապիտալիստական յերկրներում սոցիալ-դավաճանները կապիտալիստների հետ գրեղակահարում են մայիսի 1-ի ցույցի յեկած բանվորներին, իսկ բանվորներն էլ ի պատասխան դրա՝ ավելի յեն համախմբվում կոմիսաների շուրջը՝ կապիտալիստական աշխարհին վերջին հարվածը տայու և ԽՍՀՄ-ի հետ մայիսի մեկը տոնելու համար, իրբև համաշխարհային պրոլետարիատի աշխատանքի հաղթական տոն:

ՄԱՍՈՒԼԻ ՈՐԸ

Պորհրդային մամուլի տոնը սերտ կերպով կապված է «Պրավդա» թերթի պատմության հետ: «Պրավդա» թերթի № 1-ը լույս տեսավ 1912 թվի մայիսի 5-ին: Ահա այդ օրն էլ —մայիսի հինգը համարվում է կորիքային մամուլի տոն:

«Պրավդայից» առաջ հրատարակվում էր «Զվեզդա» մարքսիստական շարաթաթերթը, վոր խոշոր դեր խողաց ուսակցիայի դաժան սրերին՝ իր շուրջը համախմբելով բանվորության առաջավոր տարրերին:

1912 թվին անհրաժեշտ համարվեց մարքսիստական որաթերթ ունենալ և սկսվեց «Պրավդա»-ի հրատարակությունը:

Այդ օրվանից 19 տարի յե անցել, Մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը «Պրավդան» շատ խոշոր դժվարություններ է կրել, մի քանի անգամ փակվել ու հարածվել է, սակայն միշտ էլ յեղել և պրոլետարիատի տնտեսան ու անչեղ դրոշակակիրը:

«Աշխատավորների ինֆևագիտակցության բարձրացման առաջին և գլխավոր գեներ պիտի լինի մամուլը, վոր բաց է անում յուրաքանչյուր աշխատանքային կոմունայի տնտեսական քերությունները և այդպիսով աշխատավորների հասարակական կարծիքին և դիմում այդ յոցերը բուժելու համար»:

Լենին

ՄԱՅԻՍԱՆ ԱՊՍԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ

Ամեն տարի մայիսի 10-ին Հայաստանի աշխատավորությունը տոնում է մայիսյան ապստամբության տարեդարձը:

1920 թվի մայիսի 10-ին Լենինականում բալլեիկյան Բագմա-հեղափոխական կոմիտեն իր ձեռքն առավ իշխանությունը և հայտարարեց Հայաստանը Պորհրդային: Նույն մայիսի ընթացքում դաշնակցական բռնակալության դեմ ապստամբեցին Ղարսը, Սարեղամիչը, Նոր-Բաջաղետը և Ղազախը:


1920 թվի մայիսի 1-ի ցույցերը և սրանց հաջորդող այս ապստամբությունները պրոլետարական մասսաների հեղափոխական ընդդիման տարերային արտահայտություններն էյին: Սակայն դաշնակ խմբակցաներին

հաջողվեց ոգավել իրենց ստրատեգիական առավելություններից և առանձին-առանձին արյան հեղեղների մեջ խեղդել բալլեիկյան ապստամբությունները: Բայց դաշնակների այդ հաղթանակը ժամանակավոր էր. հեղափոխական մասսաներն ու նրանց ղեկավար կոմունիստական կուսակցությունն սկսվեցին իրենց այդ առաջին քաղաքացիական կովի փորձից, կազմակերպեցին իրենց յերկրորդ հարվածը և նույն թվի նոյեմբերյան հեղափոխությունով տուպրեցին դաշնակ-մասսոգերիստական տիրապետությունը և ազատեցին Հայաստանի աշխատավորությանը դասակարգային թշնամու լծից:



ԻՆՉ ՈԳՈՒՏ ՈՒՆԻ ՇԱՐՔԱՅԱՆԸ

1. Շարքով ցանելը տնտեսում է սերմացուն հեկտարին մինչև կես ցենաներ:
2. Շարքով ցանելով սերմերը միահավասար են ընկնում, ուրեմն՝ ծլում են հավասար:
3. Շարքացանի դեպքում պայքարը մուխոտների դեմ հեշտ է:
4. Շարքացան ցորեն կամ դարին միաժամանակ են հասունանում և մեքենայով հնձելը հեշտ է լինում:



Կ Ա Ր Տ Ո Ֆ Ի Լ Ը

Կարտոֆիլը պալարապտուղ է: Յեթե ճա-
կընդեղի գլխավոր սննդամասը շաքարն է,
ապա կարտոֆիլինն ուրան է: Կարտոֆիլի
պաշարը պարունակում է 20 տոկոս և ավելի
սուրճ և 2 տոկոս միայն սպիտակուց:

Կարտոֆիլի շատ տեսակներ կան—անա-
սունների կերի տեսակներ և ուլտ ստանալու
համար հատուկ տեսակներ: Բացի այդ, կան
չուտ հասնող և ուշ հասնող տեսակներ:

Կարտոֆիլը կարելի չէ մշակել համարյա
բոլոր կլիմայական պայմաններում: Պոնա-
վուլթյան տեսակետից այնքան էլ պահանջ-
կոտ չէ, թեև խոնավ տարիները բերքն ավե-
լի աստու է լինում:

Կարտոֆիլը չուգ յեղանակին համեմատա-
բար լավ է զիմանում, բայց ցրտի նկատ-
մամբ չափազանց զգայուն է, մանավանդ
զարնանը, յերբ կանաչ մասը (փունջը) զեռ
լավ չի զարգացել:

Հողի նկատմամբ էլ կարտոֆիլը նույնպես
պահանջկոտ չէ. պահանջում է փուխը, մի-
ջին խոնավության հող: Շատ խոնավ հողե-
րում կարտոֆիլը չի աճում: Հողը վորջան
պարարտ լինի բերքն այնքան բարձր է լի-
նում: Գլխավոր պարարտանյութը դոմազրն
է, բայց լավ կլինի ալյուր փոշի թե անմիջապես
կարտոֆիլի տեղը, այլ կարտոֆիլին համար
խորդող բույսի տեղը: Կարտոֆիլի համար
կարելի չէ առանձնարկել հետևյալ ցանրաչըր-
ջանը—աման սխար՝ ազրաչի՝ յեղ, կարտո-
ֆիլ և վերջին բույսը՝ զարնանյան ցորեն
կամ գարի:

Կարտոֆիլը ճակնգեղի պես այնքան խոր
հերկ չի պահանջում: Այս դեպքում 7-9 սան-
տիմետր խորություն հերկելը բավական է,
իսկ փուխը հողերը մինչև անդամ գրանից էլ
յերես կարելի չէ հերկել: Վարի խորու-

թյունն այնքան նշանակություն չունի, վո-
րովհետև կարտոֆիլն իր աճման ընթաց-
քում յենթարկվում է առանձին մշակութայն
—բույսը տալուն: Հողը պետք է հերկել աչ-
նանը, զարնանը կրկնահերկ անել, հետո
փոցխել և ապա կարտոֆիլ տնկել:

Չորային շրջաններին և անջրգի հողերը
լավ կլինի աչնանը խոր հերկել և զարնանը
կրկնահերկ չանել, վոր հողը չչորանա, այլ
միայն լավ փոցխել ու կարտոֆիլը տնկել:

Վորպես սերմացու, ինչպես գիտենք, ծա-
ռայում է ինքը պտուղը. թեև կարտոֆիլը
հենց առաջին տարին ծաղիկ և սերմ է տալիս,
բայց իսկական սերմին զիմում են, յերբ ու-
ղում են նոր տեսակներ ստանալ:

Կարտոֆիլը նույնպես պահվում է կույտե-
րով, բայց փորած հողում և հողով լավ ծած-
կած:

Գարնանը, յերբ արդեն ստունամանիքների
յերկյուղ չկա, կույտը բաց են անում, պա-
լարները քննում և ընտրում առողջները:

Սերմելու համար պետք է ընտրել միջին
մեծություն պարարտները: Մեծ պարարտները
լավ է կիտել կամ մինչև անդամ յերեք-չորս
մասի բաժանել, բայց մտիկ տալ վոր ամեն
մի մասի վրա մի քանի աչք լինի, վորոնցից
պետք է բույսը զարգանա:

Մեկ հեկտարի մեջ ցանում են մոտ 13-15
ցնաններ կարտոֆիլ (ցնանները 6 փուլ է):

Լավ կլինի մինչև ցանելը կարտոֆիլը չո-
րացնել: Չորացնելու համար պիտի փոխ
բուսավոր և լավ ողախիտություն ունեցող
չենքում: Թառամած պարարտներն ավելի լավ
բերք են տալիս:

Կարտոֆիլը նույնպես ցանում են շարքե-
րով, վոր և հեշտացնում է մշակութայն հե-
տագա աշխատանքները: Ցանելու խորու-

թյունը կախված է հողի հատկությունից:
Վորջան հողը ծանր է, կախյին, այնքան
յերես պետք է ցանել և բուկն ավելի ուժեղ
տալ, իսկ փուխը հողերում, մանավանդ չո-
րային, պիտի ցանել ավելի խոր, իսկ բուկ
տալը պիտի կատարել ավելի թույլ, վոր
հողն իզուր չչորանա:

Այս դեպքում ավելի լավ է բավականա-
նալ միայն թորխելով:

Պետք է այնքան խոր տնկել, վոր յերբ
բույսերը զարգանան, հողի մակերեսը ծած-
կեն: Շարքերը միմյանցից կես մետր հեռա-
վորություն վրա պիտի լինեն, իսկ շարքե-
րում՝ բույսերը միմյանցից 12-16 սանտի-
մետր հեռավորության վրա:

Կարտոֆիլի խնամքը փոցխելը, թորխելը
և բուկը տալն է:

Հաճախ պահանջ է զգացվում փոցխել մին-
չեվ ծիլերը յերեկվալը. այդպես անում են
այն դեպքում, յերբ անձրեկներից հողը կե-
ղեվակալում է, կամ մոլախոտեր են զարգա-
նում: Յերբ ծիլերը յերեկվան, պիտի փոց-
խել հողը փխրացնելու համար: Փոցխում
են իաչաձև: Փոցխի պոկած ծիլերը հողով
ծածկում են:

Յերբ բույսն այնքան մեծացած է լինում,
վոր փոցխելիս կարող է վնասվել (կտարվել),
փոցխելը զապարեցնում են ու թորխում:
Յերբ թուփը հասնում է 10-12 սանտիմետր
բարձրության, սկսում են բուկը տալը:

ՊԵՏԲ Ե ՑԱՆԵԼ ՃԱԿՆԴԵՆ

«ԵԿԿԵՆԴՈՐՑ» ՏԵՍԱԿԻ ՃԱԿՆԴԵՆ

Ճակնգեղով բույսից շատ անասուններին
կերակրում են՝ Գերմանիայում, Դանիայում,
Շվեյցարիայում և առհասարակ այն յերկր-
ներում, վորտեղ դյուլատնտեսությունը
զարգացած է:

Կերի համար առհնարավոր համարվում են
«Մամուտ» և «Նկկենդորֆ» տեսակի ճակն-
գեղը:

ԻՆՉՊԵՍ ՑԱՆԵԼ ՃԱԿՆԴԵՆԸ

Ճակնգեղը պետք է ցանել ջրովի հողերի
մեջ: Ավելի ոգտակար է հողն առաջուց պա-
րարտացնել մոխրով կամ լավ փտած աղբով
և վարել գուլթանով 3-4 վերջով խորու-
թյամբ՝ այնպես վոր հողը չուտ գա: Կավ



Կարտոֆիլի բույսը

հողերը պիտի 2-3 անգամ վարել, վոր լավ
փխրանա:

Ցանքը պետք է անել ցրտերը վերջանալուց
հետո: Ճակնգեղը պիտի ցանել ձեռքի թեթև
կամ մեծ շարքացանով, այնպես վոր շար-
քերը մեկը մյուսից 8-9 վերջով հեռավորու-
թյան վրա լինեն: Սերմը բուսանելուց հետո
լավերը թորջում են, իսկ վատերը պոկում
հանում են, այնպես վոր մի ճակնգեղը մյու-
սից 9-12 վերջով հեռավորության վրա գրա-
նվի:

Ամառվա ընթացքում ճակնգեղի արտը 2-8
անգամ քաղհանում, հողը փխրացնում են և
բուկը լցնում:

Ճակնգեղի արտը վորջան լավ մշակվի,
բերքն այնքան ավելի կլինի: Լեկնակտանում

յեղած փորձերը ցույց են տվել, վոր ճակնդեղի մի գեսայտինը մոտ 2000 փուլթ բերք է տալիս, իսկ յեթև ավելի լավ մշակվի և պարտադրվի, ավելի բերք կտա:

ԿԵՐԻ ԳԱԶՍՐ

Ճակնդեղով կարելի յե կերակրել ամեն տեսակ անասուն—կով, յեղ, դոմեշ, եշ, ձի, խոզ, վոչխար, այծ, բադ, սաղ, և այլն՝ սկսելով քչից և կամաց-կամաց շատացնելով:

Մեր տեղական կովին կարելի յե տալ որական 20 Փունց մինչև մի փուլթ ճակնդեղ: Իսկ խոզու մ շատ են կերակրում անասուններին: 40 Փունտ կաթ ավող կովին տալիս են 30-100 Փունտ ճակնդեղ և միայն 5 Փունտ դարձան, 5 Փունտ խոտ և 6 Փունտ ել ալյուր ու քուսպ միասին:

Ինչպես տեսնում եք, այնտեղ կովի դլխա—վոր կերը ճակնդեղն է վոր անասուններն ախորժակով են ուտում: Այս բոլորը կարելի յե ասել նաև դադարի մասին:

Բացի կերի ճակնդեղից, կա նաև շաքարի ճակնդեղ, վոր շաքար պատրաստելու համար են ցանում:



Կիսաշաքարային ճակնդեղ

ՅԵՐԲ ՊԻՏԻ ՑԱՆԵԼ ԲԱՄԲԱԿ

Մեզ մոտ բամբակը պետք է ցնաել ապրիլի 20-ից վոչ ուշ, վորովհետև բամբակի սերմը ծխլու համար անհրաժեշտ է վորոշ տաքություն: Բամբակը ցորենից կամ դարուց դանադանվում է նրանով, վոր ցորենի սերմերը նույնիսկ ձյունի տակ ել են ծրում: Բամբակի ցանքը շարունակվում է մինչև մայիսի 15-ը, վորից հետո կատարված ցանքը կամարվում է ուշացած: Պարարտացված տեղի սեահողերում ուշ ցանած բամբակը ժամանակին չի բացվի և կցրտահարվի: Ավադու հողերում մի քիչ ուշ ցանած բամբակը բացվում է:

Ցանկուց առաջ վարած կամ կրկնահերկ արած հողամասերը յերկաթե «զիգ-զադ» փոցիով, իսկ կոշա հողերն ավանյավոր փոցիով լավ փոցիում, արտի դար ու փոս տեղերը բահով հավասարեցնում են, վորից հետո հողամասը ցանելու համար արդեն պատրաստ է:

Չինց վոր բամբակի ծխլերը հողի տակից դուրս են դալիս և սկսում են բարձրանալ, այս...

մինքն՝ ցանելուց մոտավորապես 20-25 ուղ հետո, յերբ բամբակենին բարձրանում հասնում է մինչև 15 սանտիմետրի, այդ ժամանակ առաջին քաղհանի հետ միասին կատարում են նաև առաջին նոսրացումը:

Նոսրացումը կատարում են, վոր բամբակի բույսերը մեկը մյուսին չխանդարեն, ավելորդ ստվեր չանեն և ընդհանրապես միահավասար պայմաններում աճեն, ույսինքն՝ քիչ թե շատ հավասար չափով՝ լույս ուղ, քը նընդանյութ, ջուր և ուլյն ստանան: Բամբակենին նոսրացնում են յերկու անգամ՝ քաղհանի հետ միասին:

Յերկրորդ նոսրացումից հետո շաքար մտնում է այնքան բույս, վորքան պահանջվում է: Ընդհանրապես, բույսը բույսից պիտի լինի 30-40 սանտիմետր հեռավորության վրա և ամեն մի բնում յերկու բույս:

Քաղհանը բամբակենու մշակութային ամենակարեւոր և անհրաժեշտ աշխատանքներից մեկն է: Յեթև ժամանակին արտը չքաղհանվի, մոլախոտերը, վորոնք ավելի շուտ...

են զարգանում քան բամբակենին, կխեղդեն վերջինին: Այս պատճառով ել անհրաժեշտ է վոչնչացնել մոլախոտերը և արտը միշտ մաքուր պահել:

Քաղհանը փխրացնում է հողի յերեսն ու կեղևը: Բամբակենու քաղհանն ու փխրացումը կատարվում են միաժամանակ՝ ձեռքի կամ ձիու կուլտիվատորով—չարքերի մեջ, իսկ բույսերի արանքներում՝ ձեռքով, հողուրադի միջոցով:

Հողուրադով աշխատելիս պիտի շատ զգուշ լինել, վոր արմատները չկարվեն:

Ինչպես վերն ասվեց, առաջին քաղհանը կատարվում է առաջին նոսրացման հետ միաժամանակ՝ ցանքից մոտավորապես 20-25 ուղ հետո:

Յերկրորդ քաղհանը կատարվում է նույնպես յերկրորդ նոսրացման հետ, յերբ հողն...

Վ Ա Ղ Յ Ե Լ Ը

1. Յելը մշակելու շնորհիվ հողի պողպատաբերությունը բարձրանում է, այսինքն՝ նախկին ցանքերի (աշնան և դարնան) վերցրած սննդարար նյութերի փոխարեն նորին են կազմվում:

2. Ուշ հունիսից հետո արած ցելը չի կարող վերականգնել հողնած հողի ուլյն այն պատճառով, վոր հողին չափազանց կարճ ժամանակ է մնում հանդստանալու համար: Ուշացրած ցելը լինում է վատորակ (խոշոր կոշտերով), չոր և մոլախոտերով ծածկված:

3. Աշնան ցանքից մեծ բերք ստանալու և չորության դեմ կովելու համար, ցելը պիտի...

սկսում է ծածկվել մոլախոտերով կամ առաջին քաղհանից հետո առաջին անգամ է քաղվում, չհաշված ցանքի ջուրը:

Այս կատարում են մոտավորապես հունիսի վերջերին: Յերկրորդ քաղհանը և փխրացումը կատարվում է հունիսի 20-25-ին, իսկ յեթև չորրորդ քաղհանի կարիք է զգացվում, ապա այդ ել կատարվում է ոգոսասոթի սկզբներին:

Ամեն մի բամբակացան լավ պիտի խմուս, վոր ամեն մի ջրելուց հետո հողը նորից կեղև է բռնում, ավելի յե սնդանում և մոլախոտերը նորից զարգանում են ավելի ուժեղ թափով: Այս բոլորից ազատվելու համար, ամեն անգամ ջրելուց հետո արտը պիտի քաղհանել և փխրեցնել և վոչ թե քաղհանել ու փխրեցնել և հետո միայն ջրել, ինչպես ասում են մեր դյուրացիները:

տի անել ցորենի ցանքից անմիջապես հետո մայիսի առաջին կիսից վոչ ուշ, Յելն ամեն լույց անմիջապես հետո պիտի առփանել:

4. Առանց գոմաղբով պարարտացնելու՝ շուտ արած ցելը ցորենի նույն բերքն է տալիս, ինչ վոր հունիսի արածն ու գոմաղբով պարարտացրածը:

5. Յելի խորությունը պիտի լինի 3 վերջուկ, ցելը պիտի սև պահվի, այսինքն՝ մոլախոտերից ազատ: Անձրևների շնորհիվ կազմված կեղևը պետք է տափանջով անմիջապես փշրվի:

6. Յելի կրկնահերկը պետք է ունենա մեկ ու կիսից—յերկու վերջուկ խորություն:



Ամսաթիվ	Շաբաթվա օրերը	Ո Ր Ա Պ Ի Ր
1	Յերկուշաբթի	
2	Յերեքշաբթի	
3	Չորեքշաբթի	
4	Հինգշաբթի	
5	Ուրբաթ	
6	Շաբաթ	
7	Կիրակի	
8	Յերկուշաբթի	
9	Յերեքշաբթի	
10	Չորեքշաբթի	
11	Հինգշաբթի	
12	Ուրբաթ	
13	Շաբաթ	
14	Կիրակի	
15	Յերկուշաբթի	

ԿԱՐԵՎՈՐ ԳԵՊԳԵՐ

7 ՀՈՒՆԻՍԻ 1923 թվին Լեռնային Ղարաբաղը հայտարարվում է ինքնավար շրջան:
7 ՀՈՒՆԻՍԻ 1927 թվին, Լեհաստանում սպիտակ դավաճանի կողմից սպանեց ԽՍՀՄ-ի

Ամսաթիվ	Շաբաթվա օրերը	Ո Ր Ա Պ Ի Ր
16	Յերեքշաբթի	
17	Չորեքշաբթի	
18	Հինգշաբթի	
19	Ուրբաթ	
20	Շաբաթ	
21	Կիրակի	
22	Յերկուշաբթի	
23	Յերեքշաբթի	
24	Չորեքշաբթի	
25	Հինգշաբթի	
26	Ուրբաթ	
27	Շաբաթ	
28	Կիրակի	
29	Յերկուշաբթի	
30	Յերեքշաբթի	

ԿԱՐԵՎՈՐ ԳԵՊԳԵՐ

դեպոսան ընկ Ո. Վոյկովին: 16 ՀՈՒՆԻՍԻ 1917 թվին բացվեց բանվորների զինվորների պատ-
գամավորների խորհուրդների առաջին համադումարը: 25 ՀՈՒՆԻՍԻ 1867 թվին չույս տեսավ
Կարլ Մարքսի «Կապիտալ»-ի I հատորը: 27 ՀՈՒՆԻՍԻ 1927 թվին «Չաղես»-ի հանդիսավայր
բացումը: 28 ՀՈՒՆԻՍԻ 1929 թվին ստորագրվեց Վերսալի պայմանագրերը, վարով ամբողջ
աշխարհը բաժանվեց Անգլիայի, Ֆրանսիայի, Ամերիկայի և մյուս հաղթող պետությունների
միջև: 29 ՀՈՒՆԻՍԻ 1917 թվին Պետրոգրադում բացվեց զինվորական բայլեմիկյան կազմա-
կերպությունների խորհրդակցությունը:

Պ Տ Ղ Ա Կ Ե Ր Ը

Ով այդի սեւի, տեսած կլինի, վոր ա-
մառվա սկզբից այդու պտուղները՝ խնձորը,
աանձը, դամբուլը և այն, սկսում են վորդ-
նել և կամաց-կամաց թափվել ծառերի տակ:
Մանավանդ խնձորները շատ են վորդնում,
և տարի յե պատահում, վոր առողջ խնձոր
չի մնում: Բերքի մեծ մասն այդ վորդից
փչանում է, և այդետեղերը պտուղներից
վորջ մի սզուա չեն ստանում:

Մկրտում վորդնում են հատ ու կտոր պը-
տուղներ, հետո, քանի գնում, վորդնածը
շատանում է, կարծես վորդը հենց իրեն
պտղի միջիցն է առաջանում:

Ի՞նչ բան է:
Մի տեսակ թիթեռ է, վոր խնձորի
պտղակեր է կոչվում: Այս մի սեվ, փոքրիկ
թիթեռ է, վոր ցերեկը ծառերի մեջ է թաղ
կենում, իսկ գիշերները ծառից-ծառ թռչկո-
տելով՝ պտուղների վրա ձու յե անում: Այդ
ձվերն այնքան փոքր են, վոր դժվար է տես-
նել: Մի քանի օրից հետո ձվերից փոքրիկ
վորդ է դուրս գալիս, կրծում է խնձորի կա-
շին ու մանում է մեջը, խորանում և սկսում
կորիզներն ուտել, վորովհետեւ կորիզ շատ
է սիրում: Մի պտուղը փչացնելով՝ նա
դուրս է գալիս միջից, բերանից թել է
չինում ու վեր գալիս մի ուրիշի վրա, մի
ուրիշ պտղի մեջ մտնում: Գտուղը դրանից
սկսում է փտել ու թափվում է:

Կ Ա Ղ Ա Մ Բ Ի Թ Բ Ո Ւ Ռ Ը

Մեր բանջարանոցներում՝ ամառն սկսվե-
լան պես, մեկ էլ տեսար վորտեղից վորտեղ
կաղամբի վրա մի տեսակ դեղին կամ կանա-
չավուն վորդեր առաջացան և սկսեցին կա-
ղամբի տերեւները կրծել:

Սկզբում, քանի նրանք մանր են, խրմ-
բով են լինում, իսկ յերբ մեծանում են,
ցրիվ են դալիս:
Այդ վորդին ասում են կաղամբի թըր-
թառ:

Կաղամբի թրթուռն առաջ է գալիս մի
ապրիտակ, բավականի մեծ թիթեռից, վոր
մայրից սկսած, թռչկոտում է մեր այգիներ-
ում ու բանջարանոցներում:

Այդ թիթեռի եզը կաղամբի տերեւի
ներքեվից 30-40 շարք դեղին փոքրիկ ձվեր
է անում: Ձվերը մի շարքից հետո չերամի
տերեւի նման սեվանում են և հետո նրանցից
գալիս են գալիս փոքրիկ վորդեր, վորոնք

Այդ թիթեռները շատ ձվեր են անում և
իրենց գործն սկսում են հենց այն ժամանակ,
յերբ ծաղիկները թափվում և փոքրիկ պը-
տուղներ են դոյանում:

Տանձի պտուղները նրանք փչացնում են,
այն ժամանակ, յերբ տանձը բավականին մե-
ծանում—հասնելուն մոտենում է:

Այս շատ վնասակար վորդի դեմ պետք
է կովել ծառին փարիզյան կանաչ փչելով:
Փարիզյան կանաչ պետք է փչել հունիսից
սկսած՝ յերեք շափաթը մի անգամ, վորի
համար մի դույլ (վեդրո) ջրի մեջ լցնում են
4 մսխալ փարիզյան կանաչ և մի քիչ թարմ
կիր, լավ խառնում ու վերմորելի ապարա-
տով սրսկում:

Վորդնած և ծառի տակ թափված պը-
տուղներն ամեն առավոտ պետք է հավաքել,
լցնել մի մեծ աման ջրի մեջ: Այսպես անե-
լով՝ վորդերը պտուղներից դուրս են գալիս
և ջրի մեջ մնում: Թափված պտուղները ծա-
ռերի տակ թողնել չի կարելի, վորովհետեւ
նրանց միջից վորդերը դուրս են գալիս, նո-
րից բարձրանում ծառի վրա և առողջ պը-
տուղները փչացնում: Աշունն ու դարունը
պետք է ծառերի բները կրաշաղախ քսել:
Ով այս բոլորն անի, պտուղների բերքը կա-
զատի վառանգից:

խմբով են մնում և սկսում են կաղամբի տե-
րեվը ներքեվի կողմից կամաց-կամաց կր-
ծել:

Մեծանալով՝ 25-30 օրվա մեջ նրանք
հասունանում են, կծկվում, հարսնուկ են
դառնում՝ բանջարանոցի մեջ թափված չոր
տերեւների կամ չոփերի մեջ կամ ցանկա-
պտանների վրա: Այդ կոկոնից էլ մի 10 օրից
հետո դուրս է գալիս թիթեռը:

Կաղամբի թիթեռը շատ վնասակար մի-
շատ է: Կաղամբ չեղած տեղը նրանք ապ-
րում են մի քանի վայրի բույսերի վրա,
բայց ամենից շատ սիրում են կաղամբը:

Յեթե բանջարանոցում կաղամբ քիչ կա,
նրանց դեմ կովելը հեշտ է: Փորձված աչ-
քը, կաղամբի կողքից անցնելիս, հեշտու-
թյամբ կտեսնի նրանց ձվերը, վորոնք մա-
տով սեղմելիս իսկույն ջարդվում են: Հենց
այդպես էլ պետք է անել: 3-4 օր մի ան-

քամ կաղամբները միջից անցնելով՝ պիտի
տեսողել, ձվերը տեսնել և ջարդել: Նույն ձե-
վով կարելի յե վարվել, յեթե արդեն վորդե-
րը դուրս են յեկել:

Իսկ յեթե բանջարանոցը մեծ է և ձեռ-
քով ջարդելը դժվար է, կարելի յե կաղամբի
վրա կիր փչել, բայց լավ կլինի, վոր կիրը
հանդցրած և լավ մանրած ու փոշի շինած
լինի: Կիրը պետք է փչել առավոտները
շուտ, յերբ տերեւները դեռ թաց են:

Կարելի յե կաղամբի շարքերում բորակ
ճյուղեր փռել: Հասունացած վորդերը ճյու-
ղերի մեջ կոկոն են լինում: Հետո կարելի յե
ճյուղերը հավաքել և կոկոնները վոջնչաց-
նել:

Կաղամբի թիթեռը շատ տարածված վը-
նասատու յե և յեթե նրա դեմ չեն կովում,
նրանք շատ են բազմանում ու մեծ վնասներ
հասցնում բանջարանոցներին:

Ներկայումս կոլխոզարժման մեջ նորը և վճռականն այն է, վոր դյու-
րացիները կոյունտեսությունների մեջ են մտնում վոր թե առանձին խրմ-
բերով, այլ ամբողջ դյուղերով, ուսյուններով և նույնիսկ չրջաններով: Իսկ
դա նշանակում է, վոր կոլտնտեսության մեջ է մտնում և միջակը:

Փուլ յեկան աջերի այն պնդումները, թե դյուրացիները չեն մտնի
կոյունտեսությունների մեջ, թե կոլտնտեսությունների վարդացումն ու
դյուղի կապիտալիստական տարրերի դեմ արշավը կարող է առանց հացի
թողնել մեր յերկիրը:

Փուլ են գալիս ու փոշիանում բոլոր յերկրների կապիտալիստների վեր-
ջին հույսերը, վորոնք յերագում եյին, թե կորհրդային Միության մեջ
պետք է վերականգնի կապիտալիզմը: Նրանք դյուրացիներին համարում
էյին կապիտալիզմի հող պատրաստող մի նյութ, բայց այդ դյուրացի-
ները թողնում են մասնավոր սեփականության գովված դրոշմ և մտնում են
կոյնկալով կյանքի հունի մեջ:

Փուլ են գալիս կապիտալիզմը վերականգնելու վերջին հույսերը:

ՍՍԱԻՆ

Ամսաթիվ	Շաբաթվա օրերը	Ո Ր Ա Գ Ի Ր
1	Զորեֆշարքի	
2	Հինգշաբթի	
3	Ուրբաթ	
4	Շաբաթ	
5	Կիրակի	
6	Յերկուշաբթի	
7	Յերեֆշարքի	
8	Զորեֆշարքի	
9	Հինգշաբթի	
10	Ուրբաթ	
11	Շաբաթ	
12	Կիրակի	
13	Յերկուշաբթի	
14	Յերեֆշարքի	
15	Զորեֆշարքի	

ԿԱՐԵՎՈՐ ԴԵՊՐԵՆ

2 ՀՈՒԼԻՍԻ 1921 թվին Չանգեզուրը վերջնականապես մաքրվում է դաշնակցական բանակ-
ներից 5 ՀՈՒԼԻՍԻ Կոստեբրացիայի միջազգային օրը: 6 ՀՈՒԼԻՍԻ 1923 թվին հաստատվեց Թուր-
Սոց. Հանր. Միության սահմանադրութունը: 10 ՀՈՒԼԻՍԻ 1929 թվին ուսու սպիտակ բանդա-
ների և չին զինեթարների ավազակային հարձակումը Չին-Արեվելյան յերկաթուղու վրա: 20

Ամսաթիվ	Շաբաթվա օրերը	Ո Ր Ա Գ Ի Ր
16	Հինգշաբթի	
17	Ուրբաթ	
18	Շաբաթ	
19	Կիրակի	
20	Յերկուշաբթի	
21	Յերեֆշարքի	
22	Զորեֆշարքի	
23	Հինգշաբթի	
24	Ուրբաթ	
25	Շաբաթ	
26	Կիրակի	
27	Յերկուշաբթի	
28	Յերեֆշարքի	
29	Զորեֆշարքի	
30	Հինգշաբթի	
31	Ուրբաթ	

ԿԱՐԵՎՈՐ ԴԵՊՐԵՆ

ՀՈՒԼԻՍԻ 1924 թվին Լենինականի մանածագործարանի շինքի հիմնադրումը: 20 ՀՈՒԼԻՍԻ
1926 թվին Չերքիսկու մահը: 24 ՀՈՒԼԻՍԻ 1927 թվին Չորագետի կառուցման ուշադրանքները
սկիզբը: 28 ՀՈՒԼԻՍԻ 1914 թվին սկսվեց համաշխարհային պատերազմը:

Բ Ա Մ Բ Ա Կ Ի Ս Ր Ս Կ Ո Ւ Մ Ը

Բամբակը թունավոր զեղերով սրտկեղիս պետք է հետևել այս կանոններին՝

Առաջին բույսերի սրտկեղը կամ փոշոտելը կատարել հենց վոր վնասատուները յերևալացին:

Յերկրորդ՝ պետք է վերցնել այնքան թույն, քան վնասատուի վրա արագորեն ներգործի, բայց վոչ այնպես, վոր բամբակենին այրի, վորովհետև, ավելորդ շաղ տված թույնը ցանքի վրա այրվածքներ է առաջացնում: Դրա համար էլ, սրտկեղիս կամ փո-

տերևների վրա կարող են այրվածքներ առաջանալ:

Հիմնարար՝ բույսերը փոշիանման թույներով փոշոտելն ավելի լավ է առավոտը կանուխ սկսել, վորովհետև թույնի փոշին այդ ժամանակ ավելի հավասար է լավ է նրա տուժ բույսի վրա և փոշոտողը ավելի քիչ է վտանգվում թունավոր փոշուց:

Վեցերարդ՝ քամի կամ խոնավ յեղանակին կամ անձրևից անմիջապես հետո չպետք է վոչ սրտկել և վոչ էլ փոշոտել, վորովհետև



Սրտկիչ գործիք

չտակելու պետք է զեկավարվել ամեն մի վնասատուի համար առաջարկված զեղատուներով:

Յերրորդ՝ պատարաստած բուժույթները, բացառությամբ ծխախոտի եքստրակտի, պետք է գործադրել նույն օրը և միայն ծայրահեղ զեպքում՝ հաջորդ օրը, վորովհետև նրանք հետո փչանում են և այլևս չեն ազդում վնասատուների վրա:

Չորրորդ՝ բույսերի սրտկումը չպետք է կատարել որվա տար ժամերին, այլ այդ աշխատանքները պետք է անել առավոտները՝ ցողը վեր կենալուց հետո և յերկրները՝ ժամը 5-ից հետո, վորովհետև կեսօրին, հեղուկների արագ գոլորչացման հետևանքով

քամին հեղուկն ու փոշիանման թույնը ջրում-տանում է, իսկ անձրևը լվանում է բույսերի վրայի թույնը: Անձրևից հետո, տերևներն ավելի ջնքուշ են լինում, ուստի սրտկելիս կամ փոշոտելիս ավելի հեշտ է նրանց վրա այրվածքներ առաջացնել: Յեթն անձրևից առաջ բույսը փոշոտված կամ սրտկված եր, պետք է սպասել վոր տերևները չորանան և սրտկումը կամ փոշոտումը նորից կրկնել:

Այրվածքները, վորոնք բամբակենու վրա առաջ են գալիս անկանոն սրտկումից կամ փոշոտումից, նկատվում են այդ աշխատանքների միայն յերկրորդ և յերրորդ օրը: Չափազանց այրվելուց տերևը գորչ գույն է ստա-

նում ու չորանում, իսկ թույլ այրվելուց տերևների վրա գորչ բծեր ու տեղեր են յերևում:

Մորեխի դեմ պայքարելիս, քունավոր գրավչանյութը հացահատիկ ցանելու պես պետք է շաղ տալ և վոչ քե գուկո-գուկո:

Չեղք է շատ զգուշ լինել, վոր շաղ տված

թունավոր նյութերը անասուններն ու թռչունները չուտեն: Ամեն մի բամբակագործ, վոր թունավոր դրավչանյութ է պատրաստում ու արտում շաղ տալիս, պետք է մեշտ զգուշ լինի և տաս օրից շուտ չթողնի, վոր սրտկած կամ դրավչանյութ շաղ տված տերևներում անասուններ արածեն:

Ի Ն Չ Բ Ա Ն Կ Ե Ր Տ Ա Լ Հ Ո Վ Ե Ր Ի Ն Յ Ե Վ Ի Ն Չ Գ Ե Ս

Հավերի կուտը կամ առանձին ամանների մեջ պետք է տալ, կամ շաղ տալ հատակի վրա: Բնի մեջ կուտը պետք է շաղ տալ միայն սաստիկ ցրտերի ժամանակ, յերբ հավերը փակված են բնում: Այդ ժամանակ նրանք կուտ փնտրելով՝ ջըուշ էլ են անում, շարժվում և մի քիչ տաքանում են:

Հավերին կարելի յե նաև կարտոֆիլ տալ, բայց պետք է յեփել, մի քիչ ջարդել: Կարտոֆիլը շատ անուարար չի, սպիտակուց քիչ ունի: Դրա համար էլ կարտոֆիլով կերակրելիս պետք է մի քիչ թեփ, այլուր կամ ջուտայ խառնել:

Յեթն մտեղեն եք տալիս, դարձյալ պետք է յեփել, մանր կտտորել, հետո տալ: Մասջուր էլ կարելի յե տալ, միայն թե կարտոֆիլ, կամ մի քիչ թեփ պիտի խառնել, վոր փթրուկանա, հետո՝ տալ: Մասջուրը կարելի յե ջրի տեղ էլ տալ:

Չմեռը կանաչ չկա, վոր հավերն ուտեն, այնինչ կանաչը շատ կարևոր է: Կանաչի փոխարեն կարելի յե բազուկ, կաղամբի տե-



Տեղական հավ և ախաղաղ

րն կամ դրում տալ: Կանաչ կերը՝ բազուկը, կաղամբի տերևը, դրումը պետք է կախել հավարնի պատից՝ հատակից կես արշին



Տեղական հավ և ախաղաղ

Այս բոլոր փափուկ կերերն ամանի մեջ պիտի տալ, թե չե՝ կերի մեծ մասը վոտքի տակ կփչանա:

Բարձր, վոր հավը վիզը յերկարացնելով հասնի: Կարելի յե պատին ցցեր խփել և կանաչ կերը վրան պնդացնել: Հավարնի հա-

վերը ամբողջ սրը պատից կախած դրումն ու բազուկը կկտրահարեն ու կտաքանան:

Յեթե հավը ջեֆ չունի, անշարժ է, ախորժակը փակվում է և ջիչ է ուտում, լղարում է: Դե լղար հավի սգուան ի՞նչ պիտի լինի: Բացի այդ, լղար հավերը ձանձրանալուց սկսում են մեկ մեկու փետուր պոկել, այնքան, մինչև վոր շատերը տկորանում են, կամ ձվերն են խմում ու ձու դողանալ սովորում:

Գարուն թե ձմեռ՝ հավերը սիրում են

Յորեն 12 մսխալ

Կորեկ 12 »


Դարի 4 »

Միսեռ 5 »

Գուսպ 2 »

Ընդամենը 35 մսխալ

Իհարկե՝ ամառը, յերբ հավերը լուծարացից մինչև իրիկուն դուբան են լինում, պետք է ավելի ջիչ կեր տալ: Վերը բերած ցուցակից ամառը կարելի չէ հանել՝ միտք դուստը, սիսեռը և նույնիսկ կարտոֆիլը:



Ինչ կեր տալ հավին

աղբի մեջ ջջուճ անել: Ձիու աղբի մեջ դաբու չմարսած հատիկներ են լինում, իսկ ամառ ժամանակ՝ վորդեր: Ձիու աղբի մեջ կա և կիսամարս խոտ ու դարման, իսկ հավերը շատ են սիրում այդպիսի խոտ ու դարմանը: Ձմեռը թարմ և տաք աղբի մեջ ջջուճ անելով՝ հավերն իրենց վրտները տաքացնում են:

Հավերին պիտի հետևյալ կարգով կերակրել. առավոտյան՝ քաղցած փորին պիտի կակուղ կեր կարտոֆիլ, կիսայիփ թեփ տալ: Կակուղ կերի հետ տալիս են և միս, բուսպ, աղած վոսկոր և այլն: Կեստրին և յերեկոյան պետք է կուտ տալ:

Յեթե հավերն ամբողջ սրը փակված են բնում, ամեն մի հավին սրահան մոտավորապես պիտի տալ

- Կենսապահ կեր
- Յորեն . . . 15 մսխալ
- Կարտոֆիլ 15 մս.
- Գուսպ 2 մս.
- Բազուկ 2 մս.
- Ընդամենը 34 մսխալ
- Ձու անելու և չազացնելու համար


Այս բոլորը հավերն իրենք են ձուրում կամ նրանց փոխարեն ուրիշ կեր գտնում:

Մնում է միայն՝ ցորենը, կորեկը, դարեն, վորոնց չափն ել կարելի չէ պակասեցնել, մա՛նավանդ հնձելու և կալսելու ժամանակ, յերբ հավերն իրենք կձարեն: Բացի միշտ ել պետք է այնքան կեր տալ, վոր տանց մնացորդի ուտեն:

Կերի ամաններ պետք է ունենալ հարկավոր չափով, վոր հավերը միաժամանակ կուտ ուտեն: Յեթե ամանները ջիչ են, ամենից շուտ վրա յեն թափվում ուժեղ և առողջ հավերը և թույլերի բաժինը խում, այնինչ՝ հենց թույլերին պետք է շատ կեր տալ:

Հավերին միշտ որվա նույն ժամին պետք է կերակրել: Հավերը վարժվում են և հենց, վոր կերի ժամանակը մոտենում է հավաքվում են մի տեղ ու աված կերը հավատար ուտում:

Փարձված մարդը հավին նայելով, կարող է ասել՝ սոված է, թե վաչ: Յեվ հավի աղահուլթյամբ և հարձակվում կերի վրա, կամ անհամբեր սպասում է, ուրեմն՝ սոված է: Իսկ յեթե կեր ավողին չի նայում, ուրեմն կուշտ է, պետք է ջիչ կերակրել:



Կամբայն

Մեզանից ամեն մեկը յերբեք չպետք է մոռանա, վոր խորհարդարի յերկիրը և կապիտալիստական աշխարհը յերկար ժամանակ կողմ-կողմի խաղաղ մեռլ չեն կարող, վորպես յերկու դասակարգային բշմամի սխանակներ: «ՈՎ ՈՒՄ» հարցը պետք է լուծվի վերջիվերջո:

Այսպես է պատմության դասավանդը:

Ամսաթիվ	Շաբաթվա որերը	Ո Ր Ա Գ Ի Ր
1	Շաբաթ	
2	Կիրակի	
3	Յերկուշաբթի	
4	Յերեքշաբթի	
5	Չորեքշաբթի	
6	Հինգշաբթի	
7	Ուրբաթ	
8	Շաբաթ	
9	Կիրակի	
10	Յերկուշաբթի	
11	Յերեքշաբթի	
12	Չորեքշաբթի	
13	Հինգշաբթի	
14	Ուրբաթ	
15	Շաբաթ	
16	Կիրակի	

ԿԱՐԵՎՈՐ ԳԵՊԻՆԸ

1 ՈԳՈՍՏՈՍ Միջազգային որը: 2 ՈԳՈՍՏՈՍԻ 1914 թվին Գերմանիան պատերազմ հայտարարեց Ռուսաստանին: 5 ՈԳՈՍՏՈՍԻ 1895 թվին Ֆրեյզերը ենդերի ժառանգ: 6 ՈԳՈՍՏՈՍԻ 1906 թվին Մոսկվայում սկսվեց ընդհանուր գործադուլ: 23 ՈԳՈՍՏՈՍԻ 1927 թվին Ամերի-

Ամսաթիվ	Շաբաթվա որերը	Ո Ր Ա Գ Ի Ր
17	Յերկուշաբթի	
18	Յերեքշաբթի	
19	Չորեքշաբթի	
20	Հինգշաբթի	
21	Ուրբաթ	
22	Շաբաթ	
23	Կիրակի	
24	Յերկուշաբթի	
25	Յերեքշաբթի	
26	Չորեքշաբթի	
27	Հինգշաբթի	
28	Ուրբաթ	
29	Շաբաթ	
30	Կիրակի	
31	Յերկուշաբթի	

ԿԱՐԵՎՈՐ ԳԵՊԻՆԸ

Կայուն կլիմայական աթոռի վրա ուղանցին ամերիկական հեղափոխականներ Մակհոյին & վանդեհտուն: 30 ՈԳՈՍՏՈՍԻ 1918 թվին եսեր կապլանը ժառանգորդ կատարեց Վ. Ի. Լենինի վրա:

Ո Գ Ո Ս Տ Ո Ս Ի 1-Ը

Կամենիստական ինտերնացիոնալը ողոր-
տասի 1-ը հայտարարել է միջազգային կար-
միր որ:

Ողորտասի 1-ին բոլոր յերկրները պրոլե-
տարները կամ ինտերն զրոյի տակ փողոց են
գալու դալիս և ցույց են կազմակերպում իմ-
պերիտալիտական բուրժուազիայի դեմ, վոր
նորանոր պատերազմներ և պատրաստում
զաղուլթները բաժանելու և խորհրդային իշ-
խանությունը ասպարելու նպատակով:

Ողորտասի 1-ին—միջազգային կարմիր ո-
րը Ս. Ս. Հ. Մ. բանվորական ու ուղիստո-
վորական մասսաներն են կազմակերպված
չարքերով փողոց են դուրս դալիս և ցուցա-
հանելով մեր նվաճումները՝ նոր ուժ ու յե-
ռանդ են տալիս արտասահմանյան պրոլե-
տարիատին՝ համաշխարհային կապիտալիզմի
դեմ վճռական պայքարի նախապատրաստ-
ման համար:

Ծ Խ Ա Խ Ո Տ Ի Ք Ա Ղ Ը

Ծխախոտի քաղի կամ հավաքելու բա-
րածված յեղանակն այն է, վոր նայած տե-
